ՄԵՐԻ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՐՅԱՆԻ ՉԱՓԱԾՈՅԻ ԳՈՒՆԱՅԻՆ ՄԱԿԴԻՐ-ՍԻՄՎՈԼՆԵՐԸ

Տերյանի չափածոյի մակդիրների համակարգում իրենց ոճական արժեքով առանձնանում են գունային մակդիրները, որոնք պայմանավորված են մեծ արվեստագետի մտածողությամբ և ստեղծագործական ուղղությամբ: Տերյանի նման բանաստեղծների համար գույնը տոկ առարկայի բնորոշ հատկանիշ չէ կամ արտաքին երևույթ, այն մտածողություն է, աշխարհընկալում և գոյության կերպ: Իր անորոշ ու եթերային հույզերի ու զգացմունքների արտացոլման համար Տերյանը շատ է օգտվել գունային մակդիրներից, որոնք շատ անգամ չեն բխում բնութագրվող առարկայի կամ երևույթի առանձնահատկություններից: Դրվելով գոյականների վրա՝ այդ մակդիրները ոչ թե նրանց արտաքին հատկանիշներն են ցույց տալիս, այլ դառնում են տրամադրությունների ու ապրումների արտահայտման միջոցներ: Գույներ անվանող ածականները հանդես են բերում նաև ոճական բազմազան նրբերանգներ և ներգործուն են միայն բանաստեղծական միջավայրում:

Տերյանի բանաստեղծական բոլոր շարքերում, հատկապես «Գիշեր և հուշեր» շարքում, հաճախակի գործածական է սև մակդիրը: Մև բառով բնորոշող մակդիրների գործածության դեպքում առավել ցայտուն արտահայտվում է ժողովրդական լեզվամտածողությանը հարազատ մնալու հանգամանքը: Այս մակդիրի հմուտ գործածումով Տերյանը արտահայտում է ողբերգական հոգեվիճակներ և գունային ընկալման մեջ նոր որակ է հանդես բերում. նա այդ հատկանիշով առավելապես բնորոշում է վերացական հասկացություններ, անգո իրողություններ, ինչպես օրինակ՝

Դուք այրում եք սիրտ խոսքեր,
Որպես խայթը սև եղեռնի... (Մթնշաղի անուրջներ)
Մև խորհուրդը մեզ գերող
Ես գիտեմ, և դու գիտես... (Գիշեր և հուշեր)

Եղեռնը մեր պատմության ամենացավոտ էջն է: Հայրենասեր և առողջ դատողության տեր յուրաքանչյուր անհատ լավ գիտակցում է այդ իրողության տոկալիությունը: Բանաստեղծը սիրտ խոսքերի խայթոցի ուժգնությունը ցույց տալու համար շատ ազդեցիկ ու ցավոտ

բնորոշում է ընտրել, իսկ «սև խորհուրդ» կապակցությունում հասկացության ինքնատիպ բնորոշում է ընտրել՝ նման հատկանիշով որակելով վերացական հասկացությունը:

Անիրական, հեքիաթային զգացումների ու տրամադրությունների արտահայտման միջոց է վարդագույն մակդիրը, ինչպես՝

Հեքիաթ էր, հմայք և անծիր
Խնդություն մշուշում **վարդագույն**... (Ոսկի հեքիաթ)
Անդարձ աշխարհի **վարդագույն** միգում,
Կյանքի հեռավոր, երազ օրերում...(Ոսկի հեքիաթ)

Տերյանի անտիպ էջերի գեղարվեստական պատկերներում հանդես եկող **մանուշակագույնը** սիրո ու կարոտի զգացման նրբերանգներ է արտահայտում: Հետագայում այն պիտի դառնար Չարենի «Ծիածանի» անբաժանելի գույներից մեկը: Ահա վերոհիշյալ մակդիրի գործածության օրինակ տերյանական խոսքում՝

...Եվ վերջալույսին մի օր, օ՜, մի օր,
Մանիշակագույն սարերի լանջին
Բացվեինք իրար խոսքերով չնչին... (Անտիպ էջեր)

Բանաստեղծը հետաքրքիր գունային պատկեր է ստեղծել «Արշալույս» բանաստեղծությունում.

Դուրս ելա դաշտ -
Կանաչ ծով,
Կանաչ ծով էր, անափ... (Ոսկի հեքիաթ)

Կանաչը կյանքի հավերժության խորհրդանիշն է: Որպես մակդիր գործածվելով «ծով» բառի հետ՝ արտահայտում է բնության զարթոնքի կենսատու ուժը, ընդգծում է երևույթի գեղեցկությունը:

Տերյանը դիմել է նաև գույների սիմվոլիստական երանգավորմանը: Նրա ստեղծագործության սկզբնական շրջանի գեղարվեստական պատկերներում բավական գործածական է **կապույտը**, որը մաքրության, լուսավորության և անաղարտության խորհրդանիշ է.օրինակներ՝

Անուշ դաշտերը պատեց **կապույտ** մեգ... (Մթնշաղի անուրջներ)
Կապույտ խավարն է երկինքը պատում... (Գիշեր և հուշեր)

Ընդգծված կապակցություններում **կապույտը** լուսավոր ու հաճելի զգացումներով է հատկանշում մեգն ու խավարը: Դրանք բանաստեղծի համար խորհրդավոր ու հաճելի պահեր են, որոնք իրենց հետ բերում են տեսիլների ու անուրջների մի լուսավոր աշխարհ: Պատահական չէ, որ **կապույտը** որոշ բանաստեղծությու-

ներում դառնում է այն լուսավոր հանգրվանը, ուր ձգտում է բանաստեղծի կարոտակեզ հոգին. օրինակ՝

Կանչում ես անվերջ
Կապույտ հեռվից...
Այս իրիկնային
Կապույտ երկրում
Դու ես միշտ շրջում... (Մթնշաղի անուրջներ)

Տերյանի գեղարվեստական պատկերներում կապույտ են ոչ միայն մեգն ու մութը, այլև երեկոն ու դաշտերը, անապատն ու լույսերը... Համապատասխան զգացումների ու տրամադրությունների արտահայտման համար բանաստեղծը ոճական տարբեր նպատակներով գործածում է կապույտի բազմապիսի երանգներ՝ ծավի, լազուր, լուրթ ու երկնագույն: **Կապույտը** դառնում է արտահայտչամիջոց, որը, ինչպես նկատում է Չարենցը, «բնորոշում է դարասկզբի հայ մարդու այրվող երազների դրաման»:

Կապույտին բանաստեղծական պատկերներում բովանդակությամբ նման է **ճերմակ** մակդիրը, որը ևս լուսավոր ու մաքուր զգացումների խորհրդանիշ է: Հիշենք Տերյանի անդրանիկ շարքը բացող «Տխրություն» բանաստեղծության անուրջ կույսին.

Մի ուրու անցավ, մի գունատ աղջիկ **ճերմակ** շորերով...
(Մթնշաղի անուրջներ)

Գեղարվեստական պատկերներին յուրահատուկ արտահայտչականություն է հաղորդում **ոսկին**, որը, ըստ էության, ոսկեգույնի խորհրդանիշն է: Այն իր մեջ խտացնում է լավի ու վսեմի, նվիրականի ու անփոխարինելիի զգացմունքային տարրեր, ինչպես՝

Այսօր նորից պարտիզում
Շրջում էի ու հիշում
Քեզ արթմնի երազում,
Ոսկի, ոսկի մշուշում... (Մթնշաղի անուրջներ)

Բացել ես իմ դեմ ոսկեղեն հեռուն... (Մթնշաղի անուրջներ)

Տերյանի բանաստեղծական պատկերներին ոճական տարբեր լիցքեր հաղորդող **ոսկին** և **կապույտը** իմաստային որոշ նրբերանգներով համընկնում են. դրանք երկուսն էլ բանաստեղծի համար մաքուր ու նվիրական արժեքների որակումներ են: Պատահական չէ Տերյանի «Ոսկի հեքիաթ» բանաստեղծական շարքի խորագիրը. այն պետք է հասկանալ իբրև բանաստեղծական փոխաբերություն, որի մեջ ոսկին

ամենից նվիրականի, վսեմի համարժեքն է, իսկ հեքիաթը մարմնավորում է կյանքին հակադրվող մի բաղձալի իրականություն:

Տերյանի չափածոյում ոճական տարբեր երբերանգներով է հանդես գալիս կարմիրը՝ բանաստեղծի ամենասիրելի գույնը դեռևս վաղ մանկության տարիներից: Եթե «Անուրջներում» կարմիրը ջերմացնելու, կիզելու, վառելու և վառվելու հատկանիշով է բնորոշում վերջալույսն ու կրակը, ապա Հոկտեմբերյան երգերում այն ողջ մարդկության և հեղափոխական բանակին զինվորագրված բանաստեղծի ազատության խորհրդանիշն է դառնում.

Քեզ եմ երգում , **կարմի՛ր**,
Արյունաբո՛ւբ,
Ազատության դրո՛շ... (Անտիպ էջեր)

Կարմիրը նաև մատնանշում է արյան գույնը և տառապանքի խորհուրդ ունի իր մեջ, ինչպես՝

Կարմիր տեսիլներ - սասանում ծընող.
Ես տեսա ,ինչպես մարդիկ կուրացան:
(Այլ բանաստեղծություններ)

Արևավոր իմ պատանի, **կարմիր** է քո հարսնացուն...
... Հրահրուն ես ու բոցավառ արևածագ **ալ բռստր**,
Ու՛մ արյամբ ես ներկել **կարմիր կարմիր** թևերդ այսօր...
(Անտիպ էջեր)

Դիտարկված բանաստեղծական տողերում կարմիրի հոմանշային տարբերակները ավելի են սաստկացնում քնարական հերոսի հոգեվիճակը և խտացնում են արյան գույնը: Կարմիրը՝ որպես հեղափոխության խորհրդանիշ, հետագայում մեծ կիրառություն գտավ Տերյանի մեծ հաջորդի՝ Չարենցի գործերում:

Տերյանի խոսքարվեստում հանդես են գալիս նաև գունային այլ սիմվոլներ: Հետաքրքիր գունային պատկեր է բանաստեղծը ստեղծել «Աշնան երգ» բանաստեղծությունում.

Ցրտահա՞ր, հողմավա՞ր,
Դողացին մեղմաբար
Տերևները **դեղին**... (Մթնշաղի անուրջներ)

Բանաստեղծական այս հատվածում հանդես եկող խորհրդանիշներից **դեղինը** բնորոշում է աշնան տերևները: Այն չի գործածվել, որպեսզի առարկան տարբերակի իր մյուս տեսակներից, այլ ակնարկում է աշնանային թախծոտ տրամադրություններ: Մյուս գույնը՝

կանաչը, կյանքի հավերժության խորհրդանիշ է: Գործածվելով «աշնան կանաչ» կապակցության մեջ՝ այն կարծես դեղինի այլ երանգավորում է ստեղծում, որը ևս դառնում է թախծի ու մենակության դրսևորման միջոց:

Ակնհայտ է՝ մեղմ գույների վարպետ է Տերյանը: Յուրաքանչյուր գույն նրա չափածոյում ինքնատիպ դրսևորում ունի և ոճական կարևոր արժեք: Եթե Չարենցի «Ծիածանում» գույները առավելապես արտահայտում են ժամանակակից սիմվոլիստների հանրահայտ սկզբունքները, ապա Տերյանի չափածոյում դրանք սոսկ գունային մակդիրներ կամ սիմվոլներ չեն, այլ խտացված հույզեր ու տրամադրություններ, որոնք փոխարինում են ամբողջական պատկերների: Ասվածի ապացույցն այն է, որ տարբեր զգացումներ ու տրամադրություններ արտահայտող տարբեր գույներ, միևնույն բանաստեղծության շրջանակներում գործածվելով, նպաստում են հակադիր զգացումների ու տրամադրությունների արտահայտմանը՝ առավել ուժգին ու պատկերավոր դարձնելով բանաստեղծական խոսքը. օրինակներ՝

Դու եկար **սպիտակ** շորերով,
Երբ ձմռան երեկոն իմ սրտում
Իր թախիծն էր փռում ու տրտում
Ժպտում էր մշուշոտ շորերով...
...Հայտնվիր լուսեղեն ու գերող,
Քո փայլը ծավալիր սև կյանքում... (Անտիպ էջեր)

Շուրջըս մռայլ էր, և հեռուն մութ-
Նա իմ **սև** կյանքում վառեց մի հուր...
Ոսկի հայացքով ինձ պարուրեց,
Խաղաղ ժպիտը փռեց վրաս... (Ոսկի հեքիաթ)

Մի բանաստեղծության մեջ «սպիտակ շորերով», մյուսում՝ «ոսկի հայացքով» կինը փրկության շող է սև խավարում և կարող է սփոփել բանաստեղծի վիշտը, ջերմացնել նրա հոգին: Ինչպես նկատում ենք, որպես գունային հակադրության մշտական – բացասական բաղադրիչ հանդես է գալիս սև գույնը, որի հետ գունային հակադրություն են կազմում կապույտը, սպիտակը և ոսկին:

Տերյանը ներքին կյանքի երգիչ է, հոգեբան, ով երանգների բազմազանությամբ ստեղծում է հոգու առեղծվածների պատկերը: Դա այն հատկանիշներից է, որ նրան հանում է համաշխարհային արվեստի բարձունք: